Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Ճիկահողին և հարակից գյուղերին շտապօգնության մեքենա տրամադրելու ծրագիր»

2024 թվականի մարտի 6-ին տեղի ունեցավ «Ճիկահողին և հարակից գյուղերին շտապօգնության մեքենա տրամադրելու ծրագրի» (մինչև 67,498 ԱՄՆ դոլար) դրամաշնորհային պայմանագրի արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտակայի և «Էկոհամայնք» ՀԿ նախագահ տիկին Ռուզաննա Քարամյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Ճիրակի մարզպետի տեղակալ տիկին Նարե Ղազարյանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և համայնքի դպրոցների տնօրեններ:

Այս ծրագրի նպատակն է Ճիկահողում և հարակից գյուղերում ապրող գյուղացիների համար ապահովել անվտանգ փոխադրում դեպի Կապանի բժշկական կենտրոն՝ «Ճիկահողի» կլինիկային շտապօգնության մեքենա տրմադրելով՝ դրանով իսկ բարելավելով շտապ բժշկական օգնության որակը: Ծրագրի արդյունքում փոխադրման ժամանակը 4 ժամից կկրճատվի՝ դառնալով 2 ժամ, իսկ փոխադրման ընթացքում հնարավոր կլինի ցուցաբերել առաջին օգնություն՝ ապահովելով շտապ բժշկական օգնության արագ և անհրաժեշտ հասանելիություն:

Դեսպան Առկին և տիկին Քարամյանը ստորագրում են դրամաշնորհային պայմանագիրը

Ստորագրված պայմանագրով մեկնարկում է ծրագրի իրականացումն փուլը